

– Այդ ամեն խօսքերը, – պատասխանեց իշխանուհին ծանր եւ մեղմ ձայնով, – կրնայիր յայտնել կամաց եւ հանդարտ կերպի. ի՞նչ պետք է, որ դուրսը ստորին վիճակի մարդիկ իմանան թէ ի՞նչ նիւթի վրայ կը դառնա մեր այս խօսակցութիւնը: Բայց խնդրեմ, այդ Օրիորդը ազատելու համար ի՞նչ միջոցներ միտքդ գրեր ես:

– Ամեն կարելի եւ անկարելի միջոցներ ձեռք պիտի առնում որպէսզի այդ գերութենէն զինքն ազատեմ, – ըսաւ երիտասարդը կամաց, բայց գողացող ձայնիւ:

– Աշոտ իշխան, քու այդ խօսքերդ երիտասարդութեան անխոհեմութիւն եւ կիրք ունին, ես այնպէս կը յուսայի, որ մեր խօսակցութիւնը քեզի էլ օգտակար լինի եւ այն անձին էլ, որուն պաշտպանութեան ելեր ես, օգտակար վախճան մը ունենար: Բայց կը տեսնեմ թէ երբ մէկը «կարելի եւ անկարելի միջոցներ» ի գործ դնելու սպառնալիք կընէ, լաւ ելք մը չի խոստանար ուրիշ՝ գործողութեանս

– Եթէ ես էլ քեզի պէս այդ սեւ հադուստներու տակ սառն սիրտ մը ունենայի, եթէ ես էլ այդ հանդարտ եւ անխռով նայուածքը ունենայի, որ դիմացինը կը կարկամեցնէ, կը սառեցնէ եւ կը ծաղրէ, իրօք երջանիկ իմ անձս կը համարէի: Միթէ՞ ես գոհ եմ այս թշուառ վիճակէս, երկու տարի է, որ մոռցել եմ քուն եւ հանգստութիւն. իմ հօրս եւ աներոջս մէջ գրգռութիւն տեսած օրես հրեւակայեցի լինելիք ամեն դժբախտութիւն, ես, որ երկուքին առջեւ էլ խօսելու նաեւ համարձակութիւն չունէիք ամեն կողմ դիմեցի, կաթողիկոսը գնացի գտայ անապատներու մէջ քաշուած խնդրելու, որ յանձն առնու միջնորդել եւ թափուելիք արհմն արգիլել: Նա զրպարտութիւններէ դառնացած՝ «Ես կաթողիկոս չեմ» պատասխանեց, եւ ամեն խնդիրք մերժեց: Եպիսկոպոսաց ժողովք կար, Լոցայ դիմեցիք տարտամ պատասխաններ առի. Բագրատունի եւ Արծրունի տեսարց դիմեցի, վերջինները զուարճութեանց եւ անառակութեանց մէջ թաթախ եալ ժամանակ չունէին ինձ ուշ դնելու, իսկ միւսները թեպէտ չէին յայտնէր իրենց միտքը, բայց լաւ կը համարէին Սիւնեաց ներքին